Սամվել Կարապետյանի

5 քայլերը

դեպի Ուժեղ Հայաստան

1 300'000 ՆՈՐ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐ, ՄԱՍՆԱՎՈՐԱՊԵՍ՝ ՍԱՐՅԵՐՈՒՄ

2 0 ՀԱՐԿ՝ ՓՈՔՐ ԲԻԶՆԵՍԻ ՀԱՄԱՐ

3 20% ԷԺԱՆ ԴԵՂՈՐԱՅՔ ԲՈԼՈՐԻ ՀԱՄԱՐ

4 ԲԵՐՔԻ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ՄԹԵՐՈՒՄ ԳՅՈՒՂԵՐՈՒՄ

5 20'000 ՄԱՏՑԵԼԻ ԲՆԱԿԱՐԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՄԲ

300 000 նոր աշխատատեղեր

Ներածություն

Հայաստանում աշխատանքի և ապրուստի խնդիրը դարձել է ամենօրյա պայքար հազարավոր ընտանիքների համար: Չնայած աշխատելու պատրաստակամությանը՝ շատերը չունեն կայուն ու արժանապատիվ աշխատանք, իսկ գործազրկության իրական մակարդակը բարձր է պաշտոնական տվյալներից: Մոտ 500,000 մարդ չունի արժանապատիվ աշխատանք, ինչի հետևանքով աղքատության հաղթահարումը հնարավոր է միայն կայուն աշխատատեղերի ստեղծման միջոցով: Պետության առաջնային գերնպատակն է ապահովել, որ ՀՀ յուրաքանչյուր բնակիչ՝ քաղաքում թե մարզում, ունենա կայուն ու հեռանկարային աշխատանք իր բնակավայրում:

Մեր տնտեսական ծրագրի հիմքում լինելու է երկրի **արդյունաբերականացումը**, որը կառուցված է երկու առանցքային հիմնասյուների վրա. **ներմուծման փոխարինում տեղական արտադրանքով** և **արտահանման ավելացում**:

Իրավիճակը թվերով

Դերակատարումը տնտեսությունում: Մշակող արդյունաբերության մասնաբաժինը ՀՆԱ-ում 2018 թվականի նկատմամբ նվազել է շուրջ 7 տոկոսով, 2018թ-ի 11.3 տոկոսի դիմաց 2024թ-ին կազմելով 10.5 տոկոս: Ըստ նախնական գնատականների մշակող արդյունաբերության մասնաբաժինը ՀՆԱ-ում 2025 թվականի արդյունքներով կնվազի՝ հասնելով պատմական մինիմումի՝ շուրջ 9 տոկոս: / Եվրոպական միջին 24 տոկոս

Արտահանում: Մշակող արդյունաբերության արտահանման ցածր մակարդակը, կենտրոնացվածությունը և վատ դինամիկան Հայաստանի առևտրայի հաշվեկռի վատթարացման հիմնական պատճառն են եղել: Ցավալի փաստը այն է, որ դրամային

արտահայտությամբ 2024 թվականին 2021 թվականի նկատմամբ ապրանքների արտահան ծավալները /առանց վերաարտահանման/ նվազել են շուրջ 12 տոկոսով: Արդյունքում, 2024 թվականին ապրանքների արտահանման (առանց վերաարտահանման) մասնաբաժինը ՀՆԱ-ի նկատմամբ, ըստ գնահատականների, կազմել է 13.2 տոկոս՝ 2021 թվականի 21.7 տոկոսի համեմատ՝ արձանագրելով մոտ 39 տոկոսանոց նվազում:

Մյուս կողմից կտրուկ աճել է ապրանքների ներմուծումը: 2024 թվականին Հայաստանը ներմուծել է **3.928 մլրդ ԱՄՆ դոլարով ավելի ապրանք**, քան արտահանել է: Նույն տարում Հայաստանի ՀՆԱ-ն դոլարով արտահայտված կազմել է **25.8 մլրդ ԱՄՆ դոլար**: Արդյունքում ստացվում է, որ ապրանքների ներմուծման/արտահանման դեֆիցիտը ՀՆԱ-ի նկատմամբ կազմել է **15.22%**: Համեմատության համար նշենք, որ ԱՄՆ-ում այս ցուցանիշը կազմում է ընդամենը -**4.2%**, Թուրքիայի դեպքում -**6%**, Լեհաստանի դեպքում գրեթե **0%** է, Իռլանդիայի դեպքում **14.77%** պրոֆիցիտ կա:

Մենք առաջարկում ենք այնպիսի տնտեսական քաղաքականություն, որը մի կողմից ուղղված կլինի **ներմուծման կրճատմանը**, մյուս կողմից՝ **արտահանման ծավալների ավելացմանը**:

Ներմուծման փոխարինում տեղական արտադրանքով

Ըստ 2024 թվականի ցուցանիշների Հայաստանի ներմուծման դեֆիցիտի գրեթե **50%-ը** բաժին է ընկնում մոտ **30 ապրանքային խմբի**, որոնցից հիմնականներն են.

- Նավթային գազեր և գազանման այլ ածխաջրածիններ – **557 մլն ԱՄՆ դոլար**
  - Առաջարկվող լուծում - Գազի բարտեր էլեկտրոէներգիայի դիմաց
- Նավթ և նավթամթերք (բենզին, մազութ, նավթ, դիզելային վառելիք, յուղեր) – **468 մլն ԱՄՆ դոլար**
  - Առաջարկվող լուծում - Նավթավերամշակման գործարան, որը թույլ կտա ավելացված արժեքի 30%-ը պահել երկրում
- Դեղամիջոցներ – **144 մլն ԱՄՆ դոլար**
  - Առաջարկվող լուծում - Ջեներիկների արտադրություն
- Այլ ձողեր երկաթից – **101 մլն ԱՄՆ դոլար**
  - Առաջարկվող լուծում - Տեղական արտադրատեսականու ընդլայնում
- Ընտանի թռչնի միս – **67 մլն ԱՄՆ դոլար**
  - Առաջարկվող լուծում - Տեղական կերային բազայի զարգացում, դիզելային վառելիքի տեղական արտադրության շնորհիվ ինքնարժեքի նվազեցում
- Այլ ապրանքներ (25 անուն ապրանքներ) – **664 մլն ԱՄՆ դոլար**

Վերլուծությունը ցույց է տալիս, որ մենք ունենք հնարավորություն նվազեցնելու այս դեֆիցիտը առնվազն **1.5 - 2 մլրդ ԱՄՆ դոլարով**, և նույն այդ չափով ստեղծելու **արտադրական հզորություններ Հայաստանի ներսում**:

Ներմուծման փոխարինման քաղաքականությունն ունի ինչպես դրական, այնպես էլ բացասական կողմեր: Դրական կողմն այն է, որ շուկա մուտք գործելու համար պարտադիր չէ ունենալ ուժեղ միջազգային բրենդ, քանի որ արտադրանքը ուղղված է ներքին պահանջարկի բավարարմանը: Մյուս կողմից՝ Հայաստանի շուկան իր ծավալներով առաջարկում է սահմանափակ հնարավորություններ, ինչը ներմուծման փոխարինումը դարձնում է ոչ թե հիմնական, այլ թիրախային քաղաքականություն: Եվ այստեղ է լինելու մեր տնտեսական քաղաքականության ներմուծման փոխարինման հատվածի մեխը. տեղական շուկայի հիմքի վրա ստեղծված ընկերությունները կստանան ժամանակ **ոտքի կանգնելու և դեպի արտահանման շուկաներ դուրս գալու համար**:

Արտահանման խրախուսում

Արտահանման խթանման շրջանակում իրականացվող աշխատանքը մեծապես ուղղված է լինելու **արտասահմանյան վերազգային կորպորացիաների հետ համագործակցությանը**, որոնք կարող են Հայաստան բերել ոչ միայն սեփական կապիտալը, այլև արդեն գոյություն ունեցող շուկաները:

Արտահանման խրախուսման համար առաջարկվելու է **պետություն–մասնավոր համագործակցության (PPP)** ձևաչափ, որի շրջանակում պետությունը իր վրա կվերցնի ներդրումների մի մասը՝ հիմնականում **ենթակառուցվածքների տրամադրման և այլ օժանդակության մեխանիզմների միջոցով**: Նման ծրագրերում պետությունը չի մասնակցելու կառավարմանը, իսկ պետության մասնաբաժինը չի գերազանցելու **30%-ը**: Հետագա տարիներին այդ մասնաբաժինը աստիճանաբար կնվազի, և պետությունը ամբողջությամբ դուրս կգա տվյալ բիզնեսներից: Նման ընկերություններին առաջարկվելու է նաև խաղի հստակ և ֆիքսված կանոններ, որոնք վերաբերվելու են թե՛ հարկային դաշտին, թե՛ սեփականության իրավունքի պաշտպանությանը:

Կարևոր է նաև նշել այս պահին արտահանվող մի շարք ապրանքների արտահանման արժեշղթայի երկարացում, այդ ապրանքներն են (ըստ 2024 թվականի արտահանման ցուցանիշների)

- Պղնձի խտանյութի արտահանում – **558 մլն դոլար**
  - Առաջարկվող լուծում - Կառուցվելու է նոր, ժամանակակից պղնձաձուլարան
- Գյուղատնտեսական արտադրանքի արտահանում – **մոտ 400 մլն դոլար**
  - Առաջարկվող լուծում - Մթերման կայանների ստեղծման շնորհիվ, կարողանալու ենք նվազեցնել արտադրանքի կորուստը մոտ 30%, որը իր հերթին կբերի ինքնարժեքի

նվազեցման, ինչպես նաև թույլ կտա ներգրավել, խոշոր արտասահմանյան գործընկերների, քանի որ կկարողանանք նրանց առաջարկել ստարնդարտացված և մեծաքանակ հումքային բազա: Սա իր հերթին կբերի արժեշղթայի ընդլայնման և պարզունակ սննդամթերքի արտահանումից անցում կկատարենք վերամշակված սնունդի արտահանման:

Եզրակացություն

Վերոնշյալ միջոցառումների արդյունքում նախատեսվում է ստեղծել **300,000 նոր աշխատատեղ**, որոնցից մոտ **80,000-ը՝ մշակող արդյունաբերության ոլորտում**:

Համեմատության համար նշենք, որ 2024 թվականին՝ 2023-ի համեմատությամբ, մշակող արդյունաբերությունում աշխատատեղերի թիվը **նվազել է շուրջ 8,000-ով**, ինչը ևս մեկ անգամ ընդգծում է ոլորտի նկատմամբ նպատակային պետական քաղաքականության անհրաժեշտությունը:

Ծրագրի իրականացման համար պահանջվող ներդրումների ծավալը գնահատվում է տարեկան **1.5–2 մլրդ ԱՄՆ դոլար**, ինչը կարելի է համարել բավականին իրատեսական ցուցանիշ՝ հաշվի առնելով Հայաստանի տնտեսության **զուտ խնայողությունների մակարդակը**, ինչպես նաև **Սամվել Կարապետյանի հեղինակության գործոնը ներդրումների ներգրավման գործընթացում**:

0% հարկ փոքր և միջին բիզնեսի համար

Խնդիր

ՀՀ-ում փոքր և միջին բիզնեսը հանդիսանում է զբաղվածության և սոցիալական կայունության հիմնական հենասյուներից մեկը: Վերջին շրջանում շրջանառության հարկի բեռի աճը դարձել է ՓՄՁ-ի կենսունակությունը վտանգող գործոն՝ առաջացնելով բիզնեսների փակման, աշխատատեղերի կրճատման և սոցիալական լարվածության աճի ռիսկեր:

Առկա վիճակ ՀՀ-ում

Քաղաքացիական պայմանագիր կուսակցության ձևավորած կառավարության նախաձեռնությամբ 2025թ.-ից շրջանառության հարկի դրույքաչափը կրկնապատկվել է՝ 5%-ից դառնալով 10%: Շրջանառության հարկ վճարողների հարկումը հիմնված է ոչ թե շահույթի, այլ շրջանառության վրա, ինչն առանձնապես ծանր է փոքր բիզնեսի համար: Ըստ առկա տվյալների՝ ՀՀ-ում գործում են շուրջ 122 հազ. գերփոքր և փոքր ընկերություններ, որոնցից շրջանառության հարկ վճարողներ են համարվում մոտ 69 հազ. տնտեսվարող սուբյեկտներ: Նշված ընկերություններում աշխատում են շուրջ 400 հազ. մարդ: Պետական բյուջեի հարկային մուտքերի կառուցվածքում շրջանառության հարկը կազմում է ընդամենը 2–3%, այսինքն՝ այն պետական եկամուտների հիմնական աղբյուրներից չէ: Հետևաբար, շրջանառության հարկի նվազեցումը կամ 0% կիրառումը չի կարող լրջորեն ազդել բյուջեի ընդհանուր կատարողականի վրա, մինչդեռ կարող է ունենալ մեծ սոցիալ-տնտեսական ազդեցություն՝ ՓՄՁ գործունեության պահպանում, աշխատատեղերի պաշտպանություն և տնտեսական ակտիվության խթանում ապահովելու միջոցով:

Աղ. 2022–2025թթ. (9 ամսվա տվյալներով) հարկային եկամուտներ և շրջանառության հարկ (մլրդ. դրամ)

Տարի	Հարկային եկամուտներ	Շրջանառության հարկ	Շրջ. հարկ / հարկային եկամուտներ
2022	1,315.00	29.0	2.21%
2023	1,569.80	37.6	2.40%
2024	1,710.10	44.0	2.57%
2025	1,946.90	56.4	2.90%

Առաջարկ

Սահմանել **0% շրջանառության հարկի դրույքաչափ** շրջանառության հարկ վճարող միկրո, փոքր և միջին բիզնեսի համար՝ նպատակ ունենալով նվազեցնել ՓՄՁ-ի ֆինանսական բեռը և կանխել զանգվածային փակման ու զբաղվածության անկման ռիսկերը:

Միաժամանակ առաջարկվում է կիրառել **տարբերակված մոտեցում վարչարարության մեջ**.

- **Թուլացնել վարչարարությունը** իրական ՓՄՁ սուբյեկտների նկատմամբ՝ նվազեցնելով ստուգումների, հաշվետվությունների և տույժերի ճնշումը, որպեսզի տնտեսվարողները կարողանան կենտրոնանալ գործունեության պահպանման և զարգացման վրա:

- **Ուժեղ վերահսկողություն կիրառել** այն դեպքերի նկատմամբ, երբ խոշոր ընկերությունները կարող են արհեստականորեն տրոհվել մի քանի փոքր սուբյեկտների՝ շրջանառության հարկի արտոնությունից օգտվելու և հարկային պարտավորություններից խուսափելու նպատակով:

Հետևանք

Առաջարկի իրագործման դեպքում ակնկալվում է՝

- ՓՄՁ ֆինանսական բեռի կրճատում և գործունեության կայունացում,
- Նոր աշխատատեղերի ստեղծում և հների պահպանում,
- Սոցիալական լարվածության նվազում,
- Արտագաղթի ռիսկի նվազում,
- Տնտեսական ակտիվության աճ՝ նոր ընկերությունների բացման խթանմամբ:

Առաջարկվող **0% շրջանառության հարկը** վերաբերվելու է այն միկրո և փոքր ձեռնարկություններին, որոնց տարեկան շրջանառությունը **չի գերազանցում 100 մլն դրամը**, և որոնք հիմնականում գործում են սոցիալապես զգայուն և զանգվածային զբաղվածություն ապահովող ոլորտներում՝ ունենալով փոքր միջին շահույթներ և բարձր ծախսային բեռ: Արտոնությունից հիմնականում կօգտվեն հետևյալ գործունեության տեսակները՝

- **Վարսավիրանոցներ, սրահներ, կոսմետոլոգիական և գեղեցկության ծառայություններ**
- **Հացի փուռ, մանր արտադրություն և տեղական սննդամթերքի պատրաստում** (օր.՝ հացաբուլկեղեն, հրուշակեղեն, փոքր արտադրամասեր)
- **Փոքր խանութներ և կրպակներ** (օր.՝ մթերային, կենցաղային ապրանքներ, շուկայի փոքր տաղավարներ)

- **Փոքր հանրային սնունդ** (օր.՝ սրճարան, բուֆետ, արագ սնունդ, ընտանեկան ճաշարաններ)
- **Կենցաղային ծառայություններ** (օր.՝ դերձակ, կոշկակար, կահույքի վերանորոգում, սանտեխնիկ, էլեկտրիկ, վերանորոգման փոքր ծառայություններ, մաքրություն)
- **Ավտոսպասարկման փոքր կետեր** (օր.՝ անվադողերի սպասարկում, ավտոլվացում, փոքր վերանորոգում)
- **Կրթական և անհատական ուսուցման ծառայություններ** (օր.՝ դասընթացների փոքր կենտրոններ, կրկնուսույցների փոքր գրասենյակներ)
- **Անշարժ գույքի փոքր ծառայություններ և սպասարկում** (օր.՝ միջնորդություն, սպասարկող փոքր գրասենյակներ) և այլն...

Ըստ գնահատման՝ առաջարկի կիրառման արդյունքում տարեկան կտրվածքով կարող են ստեղծվել 2–4 հազար նոր ընկերություններ, ինչը երկարաժամկետ կտրվածքով կուժեղացնի տնտեսական աճի հիմքը:

Ճանապարհային քարտեզ

- Օրենսդրական փոփոխությամբ սահմանել այն ոլորտները, որոնց համար շրջանառության հարկը կսահմանվի **0% դրույքաչափ՝ մինչև տարեկան 100 մլն. դրամ շրջանառությունը**:
- Սահմանել հակաչարաշահման մեխանիզմներ՝ խոշորների տրոհման ռիսկերը կանխելու համար:
- Անցումային փուլում կիրառել թիրախային վերահսկողություն՝ միայն բարձր ռիսկի դեպքերի նկատմամբ:
- 6–12 ամսվա ընթացքում իրականացնել մշտադիտարկում՝ գնահատելով զբաղվածության, ընկերությունների թվի և տնտեսական ակտիվության փոփոխությունները:

20% էժան դեղեր բոլորի համար

Խնդիր

ՀՀ-ում դեղերի գների բարձր մակարդակը հատկապես ծանր ազդեցություն ունի **թոշակառուների** և քրոնիկ հիվանդություններով անձանց վրա, քանի որ նրանց եկամուտները սահմանափակ են, իսկ դեղերի կարիքը՝ շարունակական: **ՀՀ-ում միջին կենսաթոշակի չափը շուրջ 50,000 դրամ է** և այդ պայմաններում դեղերի արժեքը հաճախ կազմում է թոշակառուների ամսական ծախսերի զգալի բաժինը՝ ստիպելով կամ կրճատել բուժումը, կամ հրաժարվել այլ կենսական ծախսերից: Միևնույն ժամանակ, տարածաշրջանային համեմատությունը (մասնավորապես՝ Վրաստանի հետ) ցույց է տալիս, որ նույն խմբի դեղերը հարևան շուկայում հաճախ ավելի մատչելի են, ինչը լրացուցիչ ընդգծում է ՀՀ-ում գների կարգավորման և մրցակցության ուժեղացման անհրաժեշտությունը: Համաշխարհային բանկի «Հայաստան. առողջապահության համընդհանուր ապահովագրության ներդրման աջակցման ծրագիր» փաստաթղթի համաձայն՝ **2021թ. դեղերը կազմել են առողջապահության գրպանից վճարումների (OOP) 26.5%-ը**, ինչը հաստատում է, որ դեղերի գների նվազեցումը կարող է անմիջապես թեթևացնել հատկապես սոցիալապես խոցելի խմբերի, այդ թվում՝ թոշակառուների ֆինանսական բեռը:

Վրաստանի փորձը

Վրաստանում դեղերի բարձր գները երկար ժամանակ բնակչության համար ծանր բեռ էին: Այդ խնդիրը լուծելու համար 2017-2023թթ ժամանակահատվածներում Վրաստանը փորձարկել է 3 տարբեր մոդելներ.

1. **Քրոնիկ հիվանդությունների դեղերի փոխհատուցում (2017-ից)՝** համաֆինանսավորմամբ (co-pay) և շահառու խմբերի ընդլայնմամբ, սակայն ***այս քայլը չփվեց*** զգալի և արագ ընդհանուր ազդեցություն շահառուների դեղերի միջին ծախսի վրա:
2. **Զուգահեռ ներմուծում հարևան երկրներից (2022թ հունվարից)**՝ էժան այլընտրանքներ ներմուծելու նպատակով, բայց տվյալ միջոցառումը ***չբերեց դեղերի արժեքի կայուն նվազմանը*** ՝ նույնիսկ, որոշ խումբ դեղերի համար նկատվեց գնաճ:

3. **Արտաքին ռեֆերենսային գնագոյացում՝ ERP (2022 դեկտեմբերից, ազդեցություն՝ 2023-ին)**՝ սահմանվել է ընտրված դեղերի խմբի համար վաճառքի առավելագույն թույլատրելի գնի վերին շեմ, որը հաշվարկվել է ռեֆերենս երկրների մեծածախ գների միջինի հիման վրա (Լատվիա, Չեռնոգորիա, Բուլղարիա, Հյուսիսային Մակեդոնիա): ERP-ն դիտարկվում է որպես գնի առաստաղ, իսկ դրանից բարձր վաճառքը ենթադրում է պատժամիջոցներ:

Ամենաազդեցիկ արդյունքը տվեց 3-րդ տարբերակը՝ ընտրված դեղերի խմբի համար վաճառքի առավելագույն թույլատրելի գնի վերին շեմի սահմանումը:

ՀՀ շուկայի առկա խնդիրների հակիրճ քարտեզ

Մինչև այժմ պետության քաղաքականությունը հիմնականում իրականացվել է **թիրախավորված խմբերի համար դեղացանկի մասնակի կամ լրիվ փոխհատուցման/սուբսիդավորման** միջոցով: Սակայն այս մոտեցումը լայն շուկայի վրա բավարար ազդեցություն չի ունեցել և չի ապահովել դեղերի գների զգալի նվազում բոլոր սպառողների համար: 2026 թվականից ներդրված պարտադիր համատարած առողջապահական ապահովագրությունը կարևոր քայլ է ֆինանսական պաշտպանության ուժեղացման ուղղությամբ, բայց առանց դեղերի գների զսպման և շուկայի կարգավորման լրացուցիչ մեխանիզմների ապահովագրական համակարգի ծախսերը կարող են արագ աճել, իսկ բնակչության համար ակնկալվող օգուտը՝ սահմանափակ մնալ: Այս պատճառով անհրաժեշտ է ապահովագրությանը զուգահեռ ներդնել դեղերի գների կարգավորման գործիքներ՝ որպեսզի համակարգը լինի կայուն և արդյունքը՝ շոշափելի:

Վրաստանի հիմնական տարբերությունն այն է, որ այնտեղ օրենքով սահմանված է reference retail price-ի կիրառումը որպես **իրավականորեն պարտադիր առավելագույն թույլատրելի մանրածախ վաճառքի գին** ընտրված դեղերի լայն խմբի համար (price ceiling), և այդ սահմանափակումն ուղղակիորեն կարգավորում է շուկայական վաճառքի գները:

Առաջարկվող լուծում ՀՀ-ի համար

ՀՀ-ում դեղերի գների նվազեցման ամենաարագ և արդյունավետ լուծումը կարող է լինել Վրաստանի փորձին մոտ մոդելի ներդրումը՝ արտաքին ռեֆերենսային գնագոյացում (ERP) / մաքսիմում թույլատրելի գին (MAC) մեխանիզմով, բայց հարմարեցված ՀՀ շուկային:

- սահմանել ընտրված առաջնահերթ դեղերի համար առավելագույն թույլատրելի մանրածախ գին (“գնի առաստաղ”)՝ հիմնվելով ռեֆերենս երկրների այդ թվում Վրաստանի միջին գների վրա:

- Այլընտրանքային՝ նույն ազդող նյութով դեղի (գեներիկի) պարտադիր առաջարկման կանոն. առաջինը՝ առավել մատչելի տարբերակը: Սա կբարձրացնի գեներիկների սպառումը, կնվազեցնի կոնկրետ բրենդից կախումը, կմեծացնի մրցակցությունը:
- Խախտման համար աստիճանական պատասխանատվության կիրառում՝ ընդհուպ լիցենզիայից զրկում
-

Իրականացման ճանապարհային քարտեզ

- Ընտրել TOP-100 առաջնահերթ դեղերի ցանկը
- **Քննարկումներ դեղատնային բիզնեսների և ոլորտի հիմնական դերակատարների հետ՝** անցումային ժամկետների, կիրառման տեխնիկական կանոնների (գների ցուցադրում, գեներիկ փոխարինում, բացառություններ) և հնարավոր շուկայական ռիսկերի նախապես համաձայնեցման նպատակով:
- Հաստատել ERP/MAC հաշվարկման մեթոդաբանությունը և ձևավորել թափանցիկ գների կատալոգը
- Առավելագույն գնի պարտադիր կիրառում TOP-100-ի վրա
- Այլընտրանքային՝ գեներիկ դեղերի պարտադիր առաջարկ դեղատներում
- էլեկտրոնային մոնիթորինգ և վերահսկողական ստուգումներ, վարչարարություն

Դեղատների ֆինանսական կայունությունը պահպանելու համար, սահմանափակումների ներդրմանը զուգահեռ, պետական լիազոր մարմինը պետք է նախաձեռնի բանակցություններ լայն շրջանառություն ունեցող դեղերի փոխարինող գեներիկ արտադրողների և հիմնական ներմուծողների հետ՝ շուկայի համար առավել շահավետ մատակարարման պայմաններ և ցածր մեծածախ գին ապահովելու նպատակով: Սա թույլ կտա նվազեցնել դեղերի արժեքը ոչ միայն մանրածախ մակարդակում, այլ նաև ամբողջ մատակարարման շղթայում՝ արդյունքում բալանսավորելով դեղատների շահութաբերությունը և միաժամանակ ապահովելով սպառողի համար գնի նվազում:

Բերքի երաշխավորված մթերում գյուղերում

Խնդիր

ՀՀ-ում գյուղացիները ամեն տարի բախվում են հետևյալ խնդիրներին՝

- ցանքի համար միջոցներ հայթայթել (վառելիք, պարարտանյութ, սերմացու), բայց առանց վստահ լինելու՝ կվաճառեն, թե ոչ,
- բերքը պաշտպանել ու որակ պահել (օրինակ՝ հակակարկտային ցանցերի ու ապահովագրության բացակայության պայմաններում),
- բերքը արագ վաճառել մինչև փչանալը, քանի որ հաճախ չկա պահեստ/սառնարան,
- ցանքի ժամանակ չգիտեն՝ ինչ գնով են վաճառելու ստացվելիք բերքը, որովհետև ամիսներ հետո գները կարող են կտրուկ փոխվել,
- մեկ տարի մի ապրանքից շատ լինել, մյուսից՝ քիչ, քանի որ չկա հստակ ուղղորդում՝ ինչ և ինչքան ցանել:

Դրա հիմնական պատճառը ՀՀ-ում գյուղատնտեսական ենթակառուցվածքների ոչ բավարար զարգացած լինելն է, ինչի արդյունքում գյուղացիական տնտեսությունները բերքահավաքից հետո տեղափոխման, սորտավորման, տարրայավորման և փաթեթավորման աշխատանքները հաճախ իրականացնում են ոչ արդյունավետ, արդյունքում ունենում են բերքի մեծ կորուստներ, որակի խնդիրներ և արտահանման/իրացման լուրջ դժվարություններ:

Ծրագրի հիմնական նպատակը գյուղացուն ազատել շղթայի “ավելորդ խնդիրներից”, որպեսզի նա զբաղվի միայն մեկ առանցքային գործով՝ **որակյալ գյուղմթերք արտադրելով**:

Ներկա վիճակ

Այսօր գյուղմթերքի մթերումն ու իրացումը ՀՀ-ում հիմնականում իրականացվում է **անկազմակերպ և հատվածական մեխանիզմներով**՝ միջնորդների, ինքնաբուխ շուկաների և առանձին գործարանների միջոցով: Գյուղացին հաճախ ստիպված է բերքը վաճառել անմիջապես բերքահավաքից հետո՝ **սեզոնային գների ճնշման ներքո**, քանի որ չունի բավարար պահեստավորման, տեսակավորման և որակավորման հնարավորություն:

Միաժամանակ, ոլորտում չկա բավարար համակարգում՝ ըստ շրջանների **ինչ և որքան արտադրել**, ինչի հետևանքով առանձին գյուղմթերքների մասով պարբերաբար ձևավորվում են **դեֆիցիտներ** իսկ մյուսների դեպքում՝ **գերարտադրություն**: Այս անհամաչափությունը հանգեցնում է **գների կտրուկ տատանումների**, իսկ շուկայի պակասը լրացվում է ներմուծմամբ:

Արտադրության անհամաչափության և շուկայական տատանումների օրինակներ

Տարի	**Արտադրանք**	**Դեֆիցիտ/ պրոֆիցիտ**	**Շուկայի ռեակցիա**	**Հետևանք**
2016–2017 թթ.	Վարունգ	Պրոֆիցիտ	Գնի անկում մինչև **20 դրամ**	Իրացման դժվարություն, գյուղացու եկամտի կորուստ
2019 թ.	Կարտոֆիլ, կաղամբ	Պրոֆիցիտ	Գնի անկում **50 դրամից ցածր**	Մթերման խնդիրներ, վնասներ տնտեսություններին
2023–2024 թթ.	Կարտոֆիլ	Պրոֆիցիտ	Խոշոր խմբաքանակներ **չիրացվեցին և թափվեցին**	Ուղիղ կորուստ արտադրողներին, շուկայի խաթարում
Վերջին տարիներ	Գազար	Դեֆիցիտ / ներմուծման աճ	ՀՀ-ն գազար արտադրող երկրից դարձել է **մեծ ներկրող**	Տեղական արտադրության անկում և կախվածություն ներմուծումից

Առաջարկվող լուծում

ՀՀ-ում գյուղատնտեսական ոլորտի արդյունավետության բարձրացման, բերքի կորուստների նվազեցման և արտահանման խթանման նպատակով առաջարկվում է ստեղծել մասնագիտացված մթերման կայանների / պահեստավորման ու բաշխման լոգիստիկ համալիրների համակարգ (պիլոտ՝ Արմավիրի և Արարատի մարզերում):

Մթերման կայանները կգործեն որպես ժամանակակից լոգիստիկ հանգույցներ՝ ներառելով հետևյալ հիմնական գործառույթները.

- **վառելիքի և պարարտանյութերի մեծածախ գնում և ցանքի սկզբում մատակարարում գյուղացիական տնտեսություններին՝ հետագայում բերքով վճարելու հնարավորությամբ:** Սա թույլ կտա ունենալ վառելիքի ու պարարտանյութերի մատչելի գներ՝ կենտրոնացված գնումների շնորհիվ:

- **սորտավորում, զտում, կշռում և տրամաչափում**՝ միասնական չափանիշներով,

- **տարայավորում և փաթեթավորում**՝ հոսքային գծերով՝ ներքին շուկայի և արտահանման պահանջներին համապատասխան,

- **սառնարանային պահեստավորում**՝ տարբեր ջերմաստիճանային և խոնավության գոտիներով՝ բերքի պահպանման ժամկետը երկարացնելու համար,

- **մաքսային պահեստներ**՝ արտահանման գործընթացների արագացման և խմբաքանակների ձևավորման նպատակով,

- **որակի վերահսկման բաղադրիչ և մասնագիտական խորհրդատվություն**, որով կաջակցվի ֆերմերներին՝ պահպանելու թույլատրելի նորմերը պարարտանյութերի և թունաքիմիկատների կիրառման ժամանակ, նվազեցնելով սննդային անվտանգության ռիսկերը:

Միաժամանակ, արտադրության դեֆիցիտ–պրոֆիցիտ խնդիրների նվազեցման համար առաջարկվում է, որ ոլորտը համակարգող պետական մարմնի գործառույթների շրջանակում լինի ըստ շրջանների ֆերմերներին տրամադրել տեղեկատվություն՝ ինչ և ինչ ծավալով է նպատակահարմար արտադրել: Սա կօգնի ձևավորել առավել հավասարակշռված արտադրություն, կնվազեցնի ապրանքային դեֆիցիտները և պրոֆիցիտի ռիսկերը, և կբերի ներմուծման փոխարինման ու գների կայունացման:

Արտահանման նպատակով մթերման կայանները կարող են հանդես գալ նաև որպես առանձին մասնագիտացված սուբյեկտներ՝ մասնակցելով միջազգային ցուցահանդեսների և էքսպոների, ուսումնասիրելով մեծածախ շուկաները և կազմակերպելով հայկական գյուղմթերքի ներկայացումը միջազգային հարթակներում: Սա հատկապես կարևոր է, քանի որ միջազգային շուկան պահանջում է ոչ միայն որակ, այլ նաև մեծ քանակով համաչափ խմբաքանակներ, ինչը կարելի է ապահովել միայն կենտրոնացված մթերման և լոգիստիկ կառավարման միջոցով:

Ակնկալվող արդյունքներ

Ծրագրի իրականացմամբ ակնկալվում են հետևյալ հիմնական արդյունքները՝

- մոտ 80 աշխատատեղի ստեղծում՝ յուրաքանչյուր ներգրավված շրջանում
- բերքի կորուստների նվազում առնվազն 25%-ով
- որակի աճ և վաճառքի գնի բարձրացում
- արտահանման աճ
- գյուղմթերքի գների կայուն մակարդակ
- արտադրության ինքնարժեքի նվազում
- ցանքի ֆինանսավորման հասանելիության աճ
- անվտանգ արտադրանքի ապահովում՝ որակի շնորհիվ:

Ընդհանուր առմամբ, մթերման կայանների ներդրումը կդառնա գյուղատնտեսության արդյունավետության բարձրացման կարևոր գործիք՝ ապահովելով գյուղացու եկամտի կայունացում, կորուստների կրճատում, արտահանման հնարավորությունների մեծացում և գյուղմթերքի շուկայի ավելի կանխատեսելի զարգացում:

Իրականացման ճանապարհային քարտեզ (2026–2027)

1. **Շուկաների ուսումնասիրություն**՝ արտահանման ուղղությունների, ապրանքատեսակների ու խբաքանակների որոշման նպատակով
2. **Նախապատրաստում**՝ տարածքի ընտրություն, նախագծի հաստատում, ֆինանսավորման ձևավորում
3. **Նախագծում և թույլտվություններ**՝ տեխնիկական նախագծում, անհրաժեշտ համաձայնեցումներ
4. **Շինարարություն**՝ համալիրի կառուցում և ենթակառուցվածքների ապահովում
5. **Սարքավորումների տեղադրում**՝ սառնարան, տեսակավորում/փաթեթավորում, մաքսային պահեստ
6. **Գործարկում**՝ թիմի ձևավորում, ֆերմերների հետ պայմանագրեր, մթերումների մեկնարկ

20 000 մատչելի բնակարան պետական աջակցությամբ

Խնդիր

Երևան քաղաքում առկա է շուրջ **251,635 բնակարան**, որոնցից ըստ տարբեր գնահատականների մոտ **45-50%-ը ունի սեյսմակայունության խնդիրներ**: Սա նշանակում է, որ խնդիրը միայն նոր բնակարանների կառուցումը չէ, այլ նաև առկա բնակֆոնդի անվտանգությունը:
Ներկայումս կառավարությունը իրականացնում է բնակարանաշինության խթանման ծրագիր, սակայն դրա կիրառման ընթացքում ի հայտ են եկել մի շարք համակարգային խնդիրներ, որոնք լրջորեն նվազեցնում են ծրագրի արդյունավետությունը և ստեղծում են երկարաժամկետ ռիսկեր տնտեսության և պետական բյուջեի համար:

Գործող ծրագրի հիմնական խնդիրները

1. **Չհիմնավորված գնաճ**

Ծրագրի արդյունքում բնակարանների գները շուկայում աճել են ոչ թե արտադրողակա-նության կամ առաջարկի ավելացման, այլ արհեստական պահանջարկի խթանման հաշվին:

2. **Բարձր բյուջետային բեռ**

Միայն 2026 թվականին պետական բյուջեից տոկոսների փոխհատուցման համար նախատեսվում է հատկացնել շուրջ **100 մլրդ դրամ**, ինչը զգալի ճնշում է գործադրում հարկատուների վրա:

3. **Պետության չափազանց մեծ մասնակցություն մեկ բնակարանի գնման մեջ**

Միջին հաշվով մեկ բնակարանի դեպքում պետությունը հիփոթեքի ողջ ժամկետի

ընթացքում վճարում է ընդհանուր մարումների **55–70%-ը**, ինչը տնտեսապես անարդյունավետ է և սոցիալական արդարության հարցեր է առաջացնում:

4. **Ենթակառուցվածքների սխալ պլանավորում**

Բնակարանաշինության արագ ընդլայնումը առանց համալիր քաղաքաշինական պլանավորման հանգեցրել է լուրջ խնդիրների՝

- էլեկտրաէներգիայի
- գազամատակարարման
- ջրամատակարարման
- կոյուղու համակարգերի ոլորտներում:

Մեր առաջարկվող լուծումը

Մենք առաջարկում ենք **երիտասարդների համար մատչելի բնակարանաշինության նոր մոդել**, որը չի հանգեցնի գների աճի և չի ստեղծի երկարաժամկետ բյուջետային ճնշում:

Ծրագրի հիմնական սկզբունքները

- Պետությունը **կառուցապատողներին տրամադրում է հողատարածքներ արդեն պատրաստ ենթակառուցվածքներով** (ճանապարհ, հոսանք, ջուր, գազ, կոյուղի)
- Կառուցապատողի վրա մնում է միայն **շենքերի կառուցումը**, ինչը կտրուկ նվազեցնում է ինքնարժեքը
- Սահմանվում են **բնակարանների գների վերին շեմեր**, բացառելով սպեկուլյատիվ գնաճը
- Ծրագրով նախատեսվում է կառուցել **20,000 մատչելի բնակարան**

Երևանի ռենովացիայի և սեյսմակայունության ծրագիր

Առաջարկվում է նախաձեռնել **քաղաքային ռենովացիայի համապարփակ ծրագիր**, որի նպատակն է՝

- բարձրացնել շենքերի սեյսմակայունությունը
- բարելավել արտաքին տեսքը և քաղաքային միջավայրը
- կանխել մարդկային և տնտեսական աղետների ռիսկը

Տարբեր հաշվարկներով՝ Երևանի շենքերի շուրջ **80%-ը**,մոտ **4,000 բազմաբնակարան շենք**, չի համապատասխանում գործող սեյսմակայունության նորմերին:

Այս խնդրի լուծումը այլևս հնարավոր չէ հետաձգել. յուրաքանչյուր ուշացում մեծացնում է մարդկային և տնտեսական կորուստների հավանականությունը: